DOI: 10.59560/18291155-2025.2-147

ՍԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի դոցենտ,
իրավաբանական
գիտությունների թեկնածու

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամփոփագիր

Իրավունքի տեսության մեջ ավանդաբար իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոններ են համարում իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերության որոնումը, իրավական կարգավորման միասեռությունը, իրավական կարգավորման ամբողջականությունը, իրավունքի ճյուղի ճիշտ ընտրությունը, իրավական ձևի ընտրությունը, իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, որոնք որպես իրավական ակտերի մշակման, ձևակերպման, խմբագրման գործընթացին ուղղված կոնկրետ պահանջներ կոչված են ապահովելու իրավական ակտերի հստակությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը և կիրարկելիությունը: Սակայն իրավաբանական տեխնիկայի բովանդակային բաղադրիչները պետք է ապահովեն նաև իրավունքի պահանջների (կամ իրավունքի գերակայության համահիրավական սկզբունքի պահանջների) կենսագործումը:

Հետևաբար, իրավական օրինականության սկզբունքի հայեցակարգի դիրքերից ելնելով՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությանը ներկայացվող և իրավունքի գերակայությունն ապահովող պահանջներից են նաև՝ մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան. մարդու ազատությունը, իրավահավասարությունը և արժանապատվությունն իրավական կարգավորման նպատակն են. մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են.

մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է. պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք. մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք հարգվում ու պաշտպանվում է պետության կողմից. բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև. հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել պետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները. Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով ու միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքները և ազատությունները. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ. օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին. իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով. վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը և այլն:

Հիմնաբառեր. իրավաբանական տեխնիկա, կառուցվածք, բովանդակային կանոն, իրավունքի գերակայություն, իրավական օրինականություն, պահանջներ, սկզբունքներ:

Գործիքները, որոնք իրավաբաններն օգտագործում են ըստ իրենց մասնագիտության բնույթի, բավականին շատ են: Դրանք անհրաժեշտ է կիրառել՝ առաջնորդվելով որոշակի կանոններով, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր նպատակին հասնել իրավական գործունեության ընթացքում: Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող կանոնները վերաբերում են իրավական դրույթների ձևակերպման տրամաբանական կառուցվածքին, բովանդակության հստակությանը և իրացման արդյունավետությանը:

Ըստ Տ.Վ. Կաշանինայի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը բնույթով և ձևով տարբեր՝ իրավաբանական աշխատանք կատարելու կանոն-

ների ամբողջություն է[1]: Այս բնորոշման համաձայն հանրաճանաչ է այն մոտեցումը, որ իրավաբանական տեխնիկայի կանոնները իրավական գիտության և պրակտիկայի կողմից առաջադրված իրավական ակտերի մշակման, ձևակերպման, խմբագրման գործընթացին ուղղված կոնկրետ պահանջներ են: Դրանք ապահովում են իրավական ակտերի հստակությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը և կիրարկելիությունը:

Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող կանոնների դասակարգման վերաբերյալ արտահայտվել են մի շարք տեսակետներ: Այսպես, Ս. Ս. Ալեքսեևը բոլոր իրավական գործիքները բաժանում է երկու խմբի (օրենսդրի (կամ անհատական ակտի սուբյեկտի) կամքի արտահայտման միջոցներ և հնարքներ, իրավական ակտերի՝ որպես փաստաթղթերի արտաքին ձևին վերաբերող միջոցներ և հնարքներ)[2], Ա.Ֆ. Չերդանցևն առաջարկում է իրավաբանական տեխնիկայի կանոնները բաժանել երեք խմբի (փաստաթղթերի արտաքին ձևավորմանը վերաբերվող կանոններ, ակտերի բովանդակությանը և կառուցվածքին վերաբերվող կանոններ, իրավական փաստաթղթերի շարադրման կանոններ և հնարքներ (ըստ հեղինակի՝ լեզվական կանոններ))[3], Ն.Ա. Վլասեենկոն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի ընդհանուր կանոնների (պահանջների) հինգ խումբ (ռեկվիզիտային պահանջներ (ըստ հեղինակի՝ ներքին ձևակերպման կանոններ), բովանդակային կանոններ, կառուցվածքային կանոններ, լեզվական պահանջներ, տրամաբանական պահանջներ)[4]:

Տ.Վ. Կաշանինան առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի կանոնների (ըստ հեղինակի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող բաղադրատարրերի) վեց խումբ՝ բովանդակային կանոններ[5],

[1] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 111:

[2] Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. Т. 2. – М., 1982, էջ 272:

[3] Տե՛ս **Черданцев А.Ф.** Теория государства и права. – М., 1999, էջ 371:

[4] Տե՛ս **Власенко Н.А.** Правила законодательной техники в нормативных правовых актах субъектов Российской Федерации / В кн.: Законодательная техника современной России: состояние, проблемы, совершенствование. Т. 1. – Н. Новгород, 2001, 176-183 էջեր:

[5] Տ.Վ. Կաշանինայի կարծիքով՝ սրանք այն կանոններն են, որոնք հնարավորություն են տալիս իրավաբանական գործողությունների կատարումը փոխկապակցել այն իրավիճակի հետ, որում իրավաբանը պետք է աշխատի: Դա պայմանավորված է նրանով, որ իրավաբանի մասնագիտությունը խիստ սոցիալական է: Այն ուղղված է մարդկանց և իրականացվում է նրանց միջոցով (ներգրավվածությամբ): Մի խոսքով, ցանկացած իրավական գործունեություն պետք է լինի սոցիալապես համարժեք: Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 112:

տրամաբանական կանոններ, կառուցվածքային կանոններ, լեզվական կանոններ, ձևական (ռեկվիզիտային) կանոններ և ընթացակարգային կանոններ[1]:

Հիմնախնդրին նույն կերպ է մոտեցել Վ.Ա. Տոմինը[2]: Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը հանդիսացող գործիքակազմը նա դասակարգում է վեց խմբերի՝ բովանդակային կանոններ (սրանք այն կանոններն են, որոնք հնարավորություն են տալիս իրավաբանական գործողությունների կատարումը փոխկապակցել այն իրավիճակի հետ, որում իրավաբանը պետք է աշխատի), տրամաբանական կանոններ (իրավաբանի կողմից մասնագիտական աշխատանք կատարելու գործընթացում նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհը տրամաբանական կանոնների պահպանումն է ինչպես ընդհանուր աշխատանքային պլանի կառուցման, այնպես էլ դրա առանձին փուլերի կատարման ժամանակ), կառուցվածքային կանոններ (դրանց իրացումը նպաստում է աշխատանքի ամբողջականության ապահովմանը, որն արտաքուստ արտահայտվում է իրավական փաստաթղթերի կառուցվածքում), լեզվական կանոններ (սրանք հատկապես վերաբերում է օրենսդրությանը, սակայն պակաս կարևոր չէ լեզվական կանոնների պահպանումն իրավունքի նորմերի իրացման գործընթացում, օրինակ՝ պայմանագիր կազմելիս, դատարանի որոշումներ ու դատավճիռներ կազմելիս), ձևական (ռեկվիզիտային) կանոններ (գործնականում իրականացվում են իրավական հետևանքներ առաջացնող գործողություններ և կազմվում են իրավաբանական փաստաթղթեր, որոնք երբեմն կարող են էապես փոխել ոչ միայն իրավունքի սուբյեկտի իրավական կարգավիճակը, այլև նրա ճակատագիրը, ուստի չափազանց կարևոր է իմանալ, թե ով է կազմել իրավաբանական փաստաթուղթը, որը ձևակերպում է իրավական որևէ գործողություն) և ընթացակարգային կանոններ (ընթացակարգին վերաբերող իրավաբանական տեխնիկայի կանոնների պահպանումն օգնում է կանխարգելել չարաշահումներն իրավական նշանակություն ունեցող գործողությունների ընթացքում առաջին հերթին պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից)[3]:

---

[1] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд., - М., 2011, էջ 112:

[2] Ըստ Վ.Ա. Տոմինի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունն իրավաբանական աշխատանք իրականացնելու բնույթով և ձևով տարբեր կանոնների արտահայտություն է: Տե՛ս **Томин В.А.** Юридическая техника: учебное пособие. - Санкт-Петербург, 2015, էջ 20:

[3] Տե՛ս **Томин В.А.** նշվ. աշխ., 20-21 էջեր:

Վ.Ա. Տոմինն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոնների հետևյալ շրջանակը՝ իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերությունների որոնումը, իրավական կարգավորման միասեռությունը, իրավական կարգավորման ամբողջականությունը[1]: Նրա կարծիքով՝ իրավական կարգավորման ամբողջականությանը հասնելու միջոցներ են հանդիսանում իրավունքի ճյուղի, իրավական ձևի ճիշտ ընտությունը և իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին:

Տ.Վ. Կաշանինայի կարծիքով՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոններն են (ըստ հեղինակի՝ սոցիալական ադեկվատության հասնելու կանոններ)՝ իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերության որոնում, իրավական կարգավորման միասեռություն, իրավական կարգավորման ամբողջականություն, իրավունքի ճյուղի ճիշտ ընտրություն, իրավական ձևի ընտրություն, իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովում միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին[2]:

Ակնհայտ է, որ նշված երկու հեղինակների մոտ բովանդակային կանոնների շրջանակը գրեթե նույնական է, միայն այն տարբերությամբ, որ Վ.Ա. Տոմինն իրավունքի ճյուղի, իրավական ձևի ճիշտ ընտրությունը և իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին ընդգրկում է մեկ ընդհանուր կանոնի՝ իրավական կարգավորման ամբողջականության մեջ:

Իրավական կարգավորման ոլորտն այն հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք օբյեկտիվորեն պետք է կարգավորված լինեն իրավունքի կողմից: Մասնագիտական իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ իրավական կարգավորման ոլորտն ընդգրկում է առավել կարևոր, կայուն այնպիսի հարաբերություններ սոցիալական ընդհանրությունների, առանձին անհատների միջև, որոնք կարող են կարգավորվել իրավունքով և գիտակցվել մարդկանց կողմից՝ ձևավորելով վերջիններիս կամքն ու վարքագիծը:

Ընդհանուր տեսակետի համաձայն՝ իրավական կարգավորման ոլորտ մտնում են այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են,

[1] Տե՛ս **Томин В.А.** նշվ. աշխ., 21-22 էջեր:
[2] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, 114-122 էջեր:

պետք է և կարգավորված են, ինչպես նաև նրանք, որոնք կարող են, պետք է, սակայն կարգավորված չեն: Հարաբերությունները, որոնք չպետք է կարգավորվեն և կարգավորված չեն օրենքով, չեն մտնում իրավական կարգավորման ոլորտ:

Ն.Ա. Պյանովը գտնում է, որ իրավական կարգավորման ոլորտն ամենաընդհանուր կերպով ընդգրկում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք՝ 1) կայուն են, 2) կամային են, 3) ենթարկվում են արտաքին վերահսկողության, 4) առավել կարևոր են պետության, հասարակության և առանձին անհատների համար[1]:

Տ.Վ. Կաշանինան առանձնացնում է իրավական կարգավորման ոլորտ մտնող հասարակական հարաբերությունների հինգ հատկանիշներ՝

1. կրում են կամային բնույթ և սուբյեկտներին ընձեռեն վարքագծի կամ գործողության ընտրության հնարավորություն,
2. ենթարկվում են արտաքին վերահսկողության,
3. դրանց խախտման դեպքում հնարավոր է կիրառել պետական հարկադրանք,
4. արտահայտում են հասարակության զարգացման պահանջմունքները,
5. դրանց իրացման համար անհրաժեշտ են նյութական և այլ միջոցներ[2]:

Թվարկված հատկանիշներից անգամ մեկի բացակայությունը կհանգեցնի իրավունքի գործողության անարդյունավետության:

Իրավաբանական տեխնիկայի բովանդակային հաջորդ կանոնն **իրավական կարգավորման միասեռությունն է**: Խոսքն այն մասին է, որ իրավական փաստաթուղթը պետք է սահմաններ ունենա, հակառակ դեպքում կնվազի դրա արդյունավետությունը: Նորմատիվ ակտը պետք է հաշվարկված լինի միասեռ հասարակական հարաբերությունների կարգավորման վրա: Միևնույն ակտում տարբեր տիպի և սեռի հարաբերությունների կարգավորումը խոսում է արհեստավարժության պակասի մասին: Նույնը վերաբերում է նաև իրավակիրառ ակտերին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 9-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

[1] Տե՛ս **Пьянов Н.А.** Государственное регулирование и его предмет / Н.А. Пьянов // Сибирский юридический вестник. – № 1 (52). – 2011. 20–24 էջեր:

[2] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 115:

Այս առումով պետք է համաձայնվել Գ. Դանիելյանի այն տեսակետի հետ, որ գործնականում շատ դժվար է կանխորոշել նորմատիվ իրավական ակտի կարգավորման հստակ շրջանակները, ավելին՝ գրեթե հնարավոր չէ առանձնացնել որևէ օրենսդրական ակտ, որում անվիճելիորեն ներառված լինեն միայն տվյալ իրավական ակտի կարգավորման առարկային վերաբերող հարաբերությունները: Պարզապես հաճախ «կարգավորման առարկայի շրջանակ» հասկացության մեջ ներառվում են այնպիսի նորմեր, որոնք առավել ամբողջական ու կանխատեսելի են դարձնում իրավական կարգավորումը, ինչն իրավաչափ է[1]:

Հիշյալ սկզբունքից ոչ իրավաչափ շեղում կարող է համարվել այն մոտեցումը, երբ միևնույն նորմատիվ իրավական ակտում անհարկի ներառվում են միմյանց հետ որևէ անմիջական առնչություն չունեցող իրավական նորմեր: Այսպիսի կարգավորումը ոչ միայն պարզապես հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին, այլև գործնականում բարդացնում է իրավակիրառ պրակտիկան, քանզի դժվար է լինում կիրառման համար փնտրելու տվյալ հարաբերության կարգավորման համար անհրաժեշտ իրավական նորմը[2]:

Իրավական կարգավորման ամբողջականությունը, որպես իրավաբանական տեխնիկայի ընդհանուր կանոն, վերաբերում է ինչպես իրավաստեղծագործությանը, այնպես էլ իրավունքի կենսագործմանն ու կիրառմանը:

Երբ հասարակական հարաբերությունը կարգավորված չէ նորմատիվ իրավական ակտերով, սակայն կարող էր և պետք է կարգավորված լիներ, ընդունված է փաստել իրավունքի բացի առկայությունը, երբ խոսքը վերաբերում է իրավակիրառմանը, ապա՝ իրավիճակի ոչ ամբողջական կարգավորվածության մասին:

Լ.Ա. Մորոզովան իրավունքի բացերի տակ հասկանում է գործող օրենսդրության մեջ այն նորմի բացակայությունը, որին համապատասխան իրավական կարգավորում պահանջող խնդիրը պետք է լուծվի[3]: Վ.Վ. Լազարևի կարծիքով՝ իրավունքի բաց է համարվում այն նորմատիվ կարգադրագրերի լրիվ կամ մասնակի բացակայությունը, որոնց

[1] Տե՛ս **Դանիելյան Գ.** Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր., 2021. 138-139 էջեր:

[2] Տե՛ս **Դանիելյան Գ.** նշվ. աշխ., էջ 139:

[3] Տե՛ս **Морозова Л.А.** Теория государства и права: учебник. - М.: Норма: ИНФРА-М, 2017, էջ 331:

անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ և վեճերի լուծման գործնական անհրաժեշտությամբ, հիմնական սկզբունքներով, քաղաքականությամբ, գործող օրենսդրության իմաստով ու բովանդակությամբ, ինչպես նաև իրավական ներգործության ոլորտում կենսական փաստերի կարգավորմանն ուղղված պետական կամքի այլ դրսևորումներով[1]:

Քանի դեռ իրավական բացը վերացված չէ իրավաստեղծ մարմնի կողմից, անհրաժեշտ է իրավակիրառ գործընթացում այն ժամանակավորապես հաղթահարել: Օրենսդրությամբ նախատեսված են հաղթահարման երկու եղանակներ՝ օրենքի անալոգիա, այսինքն՝ համանման հարաբերություն կարգավորող նորմի հիման վրա որոշման կայացում, և իրավունքի անալոգիա, երբ կիրառվում են իրավունքի համընդհանուր, ճյուղային կամ ինստիտուցիոնալ սկզբունքները:

Իրավունքի բացերի հիմնախնդրին անդրադարձած հեղինակներից Ա. Ասատրյանն իրավացիորեն նշում է, որ դրանց լրացման[2] լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է: Սակայն, իրավունքի կիրառմանը ներկայացվող պահանջներից մեկն էլ օպերատիվությունն է: Իրավաստեղծագործության ճանապարհով բացի վերացումը շատ դանդաղ գործընթաց է, որը նվազեցնում է իրավակիրառման արդյունավետությունը:

[1] Տե՛ս **Лазарев В.В.** Пробелы в праве и пути их устранения: монография. Репр. изд. - М.: Норма: ИНФРА-М, 2021, էջ 37:

[2] Ըստ Ա. Ասատրյանի՝ պետք է ամբողջությամբ բացառել «բացը վերացնելու», «բացը լրացնելու» տերմինները նույնացնելու հնարավորությունը: Հեղինակի կարծիքով, այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանրապես բացերը վերացնելուն, այլ ուղղակիորեն դատահրավական համակարգի ունեցած դերին այդ բացերը լրացնելու գործընթացում, պետք է օգտագործել «բացերը լրացնել» տերմինը: «Բացերը լրացնել» ասելով նկատի է առնվում իրավասու պետական մարմնի (դատարանի) կողմից վիճահարույց իրավահարաբերությունների վերաբերյալ հատուկ որոշման ընդունումը՝ օրենսդրության կամ իրավունքի բացը բացահայտելու պայմաններում: «Բացերի վերացում» հասկացությունը, որը ենթադրում է դրանց ամբողջական վերացում իրավունքի և օրենքի համակարգում, պետք է ճանաչվի որպես առավել համարժեք այն գործառույթների համար, որոնք իրականացնում են իրավասու իրավաստեղծ մարմինները՝ օրենսդիր, գործադիր և այլն: Բացերի վերացումը կատարվում է լրացումների միջոցով: Բացի լրացումը իրավաստեղծ մարմինների լիազորությունն է և իրավունքի չբավականացնող նորմի մշակումը: Ինչ վերաբերում է «բացերի հաղթահարում» տերմինին, ապա այն ունի իր կիրառման ոլորտը. սա իրավասու պետական մարմինների գործունեությունն է (գրանցման մարմիններ, գերատեսչական կոմիտեներ և այլն), որոնք ստիպված են լինում հաճախ իրենց գործունեության ընթացքում լուծել այն հարցը, թե ինչպես պետք է վարվել իրավական կարգավորման բացերի հայտնաբերման դեպքում (տե՛ս **Ասատրյան Ա.** Իրավունքի բացերի լրացման, վերացման հասկացությունը և դրանց հաղթահարման եղանակները., Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն. - 2023. № 1., էջ 3):

Քանի դեռ իրավունքի բացը իրավաստեղծ մարմնի կողմից չի վերացված, իրավակիրառ գործունեության ընթացքում ժամանակավոր ծագում է դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Իրավունքի կիրառման օպերատիվությունն ու արդյունավետությունն ապահովելուն է ուղղված հենց իրավաբանական անալոգիայի միջոցով իրավունքի բացի հաղթահարման՝ օրենքներով նախատեսված հնարավորությունը[1]:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ օրենսդրության մեջ կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ տվյալ իրավահարաբերության էությանը համապատասխան իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա): Հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը, իսկ 4-րդ մասի բովանդակությունից բխում է, որ ոչ բոլոր իրավիճակներում կարող է կիրառվել իրավունքի կամ օրենքի անալոգիա, մասնավորապես՝ օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը:

[1] Տե՛ս **Ասատրյան Ա.** նշվ. աշխ., 3-19 էջեր:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասն արգելում է Քրեական օրենքի Հատուկ մասի նորմերի կիրառումն անալոգիայով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ Քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անալոգիայով կիրառվել, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը, մինչդեռ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասն առհասարակ արգելում էր Քրեական օրենքի կիրառումն անալոգիայով:

Իրավաբանական տեխնիկայի բովանդակային հաջորդ կանոնն **իրավունքի ճյուղի ճիշտ ընտրությունն է,** որը կախված է այն իրավիճակից, որին իրավաբանը բախվում է: Իրավունքի ցանկացած ճյուղ կարգավորում է հասարակական հարաբերությունների կոնկրետ շրջանակ: Իրավունքի ճյուղի ընտրությունը, մեր կարծիքով, նշանակում է կենտրոնանալ, թե կոնկրետ որ ճյուղին է վերաբերում տվյալ իրավիճակը կամ իրավական վեճը: Դա կարևոր է իրավաբանական փաստաթուղթը ճիշտ կազմելու, կիրառելի օրենսդրության ընտրության, համապատասխան պետական մարմին կամ դատարան դիմելու համար: Իրավունքի ճյուղի ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է վերլուծել իրավիճակը, պարզել իրավահարաբերության բնույթը, դրանց կողմերը, իրավախախտման տեսակը:

Ինչ վերաբերում է **իրավունքի ձևի ընտրությանը,** ապա ըստ Տ .Վ. Կաշանինայի՝ դա պետք է իրականացվի երկու փուլով: Առաջին փուլում որոշվում է, թե իրավական կարգավորման ոլորտի որ մասին է (հանրային-իրավական կամ մասնավոր-իրավական) վերաբերում հասարակական հարաբերությունը, իրավիճակը, իսկ երկրորդ փուլում իրականացվում է իրավական ձևի ընտրություն. սկզբում որոշվում է իրավական կարգավորման առավել հարմար տեսակը (նորմատիվ կամ անհատական և այլն), այնուհետև ընտրվում է իրավական փաստաթղթի օպտիմալ տարատեսակը[1]:

Իրավաբանական տեխնիկայի՝ վերը թվարկված բովանդակային վերջին կանոնը համարվում է **իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին**: Սա նշանակում է իրավական ակտերի կազմման և կիրառման ընթացքում ապահովել դրանց համապատասխանությունն այն միջազգային իրավական

[1] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 120:

սկզբունքներին ու նորմերին, որոնք պետությունը վավերացրել է կամ որոնք ունեն համընդհանուր բնույթ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածն (Օրենքում օգտագործված հիմնական հասկացությունները) ամրագրում է մոտարկում տերմինը, ինչը, ըստ նշված օրենքի՝ նշանակում է նորմատիվ իրավական ակտի նախագիծ մշակելու միջոցով միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում ներպետական օրենսդրության համապատասխանեցում առանձին ոլորտներում տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված իրավական կարգավորումներին:

Այսպիսով, գրականության մեջ եղած տեսակետների ամփոփումը ցույց է տալիս, որ հեղինակների մեծ մասն իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոններն են համարում՝ իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերության որոնում, իրավական կարգավորման միասեռություն, իրավական կարգավորման ամբողջականություն, իրավունքի ճյուղի ճիշտ ընտրություն, իրավական ձևի ընտրություն, իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովում միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին: Այդ կանոնները որպես իրավական ակտերի մշակման, ձևակերպման, խմբագրման գործընթացին ուղղված կոնկրետ պահանջներ կոչված են ապահովելու իրավական ակտերի հստակությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը և կիրարկելիությունը:

Մեր համոզմամբ՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակային թվարկված կանոնները լրացման կարիք ունեն՝ ելնելով այն հանգամանքից, որ իրավաբանական տեխնիկայի բովանդակային բաղադրիչներն ապահովում են, որպեսզի իրավական ակտերը լինեն ոչ միայն տեսականորեն ճիշտ, գործնականում կիրառելի, հստակ, համաչափ, այլ նաև իրավունքի պահանջներին (կամ իրավունքի գերակայության համահիրավական սկզբունքի պահանջներին) համապատասխան:

Իրավունքի գերակայության սկզբունքից բխող այդ հիմնարար պահանջն արտացոլված է այնպիսի համակարգակազմիչ նշանակություն ունեցող սկզբունքում, ինչպիսին է իրավական օրինականությունը: Իրավական օրինականության առաջին տարրը՝ իրավաօրինականությունն իրավական կարգավորման առաջին երկու փուլերում՝ իրավունքի կազմավորման ու իրավաստեղծագործության, անպայմանորեն ենթադրում է մեծամասամբ սահմանադրական կամ օրենսդրական ամրագրում ունեցող երկու խումբ պահանջներ՝ ա) իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայաց-

վող. բ) իրավաստեղծ գործունեության ընթացակարգին և ձևին ներկայացվող պահանջներ[1]:

Իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայացվող պահանջներից են, օրինակ՝ 1) մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան. 2) մարդու ազատությունը, իրավահավասարությունը և արժանապատվությունն իրավական կարգավորման նպատակն են. 3) մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են. 4) մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է. 5) պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք. 6) մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք հարգվում ու պաշտպանվում է պետության կողմից. 7) բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև. 8) հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել պետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները. 9) Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով ու միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքները և ազատությունները. 10) Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ. 11) օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին. 12) իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով. 13) վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը և այլն[2]:

---

[1] Իրավունքի գերակայության սկզբունքից բխող և իրավաստեղծագործության ընթացակարգին ու ձևին ներկայացվող պահանջներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով: Վերջինս որպես իրավաստեղծ տեխնիկայի կանոններ կարգավորում է այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման կարգը, իրավական ակտերի նախագծերի փորձաքննության և պետական գրանցման հարբերությունները, օրենսդրական տեխնիկայի կանոնները և այլն:

[2] Թվարկված պահանջների մեջ գերակշռում էր մարդու իրավունքների գերակայությունը, սակայն հետևողական մոտեցման դեպքում դա նույն իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորումն է (տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права. - М., 1997. - 376 с.; **Арутюнян Г.Г., Баглай М.Б.** Конституционное право: Энциклопедический словарь. - М., Норма, 2006, էջ 63):

Իրավունքի գերակայության այս պահանջները կարելի է շարունակել, սակայն թվարկվածներն էլ բավարար են հասկանալու համար, որ դրանք կոչված են ապահովելու օրենքների ու այլ իրավական ակտերի համապատասխանությունն իրավունքին, համամարդկային իրավական սկզբունքներին, մարդու իրավունքներին և, իհարկե, Սահմանադրությանը: Կարևոր է նշել, որ այդ պահանջները սոսկ պատվիրաններ չեն, այլ ունեն որոշակի երաշխիքներ[1]: երաշխիքներ[1]:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով), ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով:
2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին:
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին:
4. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին:
5. **Ասատրյան Ա.** Իրավունքի բացերի լրացման, վերացման հասկացությունը և դրանց հաղթահարման եղանակները: Բանբեր Երևանի Համալսարանի, Իրավագիտություն, 2023. № 1, 3-19 էջեր:
6. **Դանիելյան Գ.** Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր., «Տիգրան մեծ» հրատ., 2021, 160 էջ:
7. **Арутюнян Г.Г., Баглай М.Б.** Конституционное право: энциклопедический словарь. - М., Норма, 2006, 544 էջ:
8. **Алексеев С.С.** Общая теория права. Т. 2. – М., 1982, 360 էջ:
9. **Власенко Н.А.** Правила законодательной техники в нормативных правовых актах субъектов Российской Федерации / В кн.: Законодательная техника современной России: состояние, проблемы, совершенствование. Т. 1. – Н. Новгород, 2001, 176-183 էջեր:

[1] Այդ երաշխիքները և իրավաօրինականության իրացման կառուցակարգերը բազմազան են՝ սկսած քաղաքացիական հասարակության հայեցակարգից մինչև իրավական պետության տեսությունն իր բոլոր ինստիտուցիոնալ հնարավորություններով:

10. **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - Норма: ИНФРА-М, 2011, 496 էջ:

11. **Лазарев В.В.** Пробелы в праве и пути их устранения: монография. Репр. изд. - М.: Норма: ИНФРА-М, 2021, 184 էջ:

12. **Морозова Л.А.** Теория государства и права: учебник. - М.: Норма: ИНФРА-М, 2017, 464 էջ:

13. **Нерсесянц В.С.** Философия права: учебник для вузов. - М.: Издательская группа ИНФРА-М - НОРМА, 1997, 652 էջ:

14. **Пьянов Н.А.** Государственное регулирование и его предмет / Н.А. Пьянов // Сибирский юридический вестник. – № 1 (52). – 2011, 20–24 էջեր:

15. **Томин В.А.** Юридическая техника: учебное пособие. - Санкт-Петербург, 2015, 84 էջ:

16. **Черданцев А.Ф.** Теория государства и права. – М., 1999, 432 էջ:

СОДЕРЖАТЕЛЬНЫЕ ПРАВИЛА ЮРИДИЧЕСКОЙ ТЕХНИКИ

Аннотация

В теории права традиционно содержательными правилами юридической техники считают: поиск общественных отношений в сфере правового регулирования, единообразие правового регулирования, целостность правового регулирования, правильный выбор отрасли права, выбор правовой формы, обеспечение соответствия правовых документов принципам и нормам международного права. Данные требования к процессу разработки правовых актов призваны обеспечивать ясность, логичность, последовательность и применимость правовых актов. Однако содержательные компоненты юридической техники должны также обеспечивать реализацию принципа верховенства права.

Следовательно, с позиций концепции правовой законности необходимо в рамки содержательных правил юридической техники включать правила по обеспечению верховенства права: права человека неотчуждаемы и принадлежат ему по рождению; свобода, равенство и достоинство человека являются целью правового регулирования; человек, его достоинство, основные права и свободы являются высшими ценностями; признание, охрана, обеспечение и защита прав человека являются обязанностью государства; государство ограничено основными правами и свободами человека и гражданина как непосредственно

действующим правом; государство уважает и охраняет достоинство человека как неотъемлемую основу его прав и свобод; все люди равны перед законом; ограничения основных прав и свобод не могут выходить за рамки, установленные международными обязательствами государства; права и свободы человека и гражданина, закрепленные в Конституции, не исключают иных прав и свобод, установленных законами и международными договорами; Конституция имеет высшую юридическую силу и т. д.

Ключевые слова: юридическая техника, структура, содержательное правило, верховенство права, правовая законность, требования, принципы.

CONTENT RULES OF LEGAL TECHNIQUE

Annotation

In legal theory, the following are traditionally considered to be substantive rules of legal technique: the search for social relations in the sphere of legal regulation, uniformity of legal regulation, integrity of legal regulation, the correct choice of the branch of law, the choice of legal form, ensuring the compliance of legal documents with the principles and norms of international law. These requirements for the process of developing legal acts are intended to ensure clarity, logic, consistency, and applicability of legal acts. However, the substantive components of legal technology must also ensure the implementation of the principle of the rule of law.

Therefore, from the standpoint of the concept of legal legitimacy, it is necessary to include in the framework of the substantive rules of legal technique the rules for ensuring the rule of law: human rights are inalienable and belong to him by birth; freedom, equality and dignity of man are the goal of legal regulation; man, his dignity, fundamental rights and freedoms are the highest values; recognition, protection, provision and defense of human rights are the responsibility of the state; the state is limited by the fundamental rights and freedoms of man and citizen as a directly applicable law; the state respects and protects human dignity as an integral basis for his rights and freedoms; all people are equal before the law; restrictions on fundamental rights and freedoms may not go beyond the limits established by the

international obligations of the state; the rights and freedoms of man and citizen enshrined in the Constitution do not exclude other rights and freedoms established by laws and international treaties; the Constitution has the highest legal force; laws must comply with the Constitution, and other legal acts must comply with the Constitution and laws; legal acts are adopted on the basis of the Constitution and laws and for the purpose of ensuring their implementation, in case of a conflict between the norms of ratified international treaties and laws, the norms of the international treaties shall apply, etc.

Key words: legal technique, structure, substantive rule, rule of law, legal legitimacy, requirements, principles.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 16.06.2025 թ., տրվել է գրախոսության 17.06.2025 թ., ընդունվել է տպագրության 20.06.2025 թ.: